ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2019թ-ի հուլիսի 10-ին, ժամը 20:00-ին ավարտվեց Հանրային հեռուստաընկերության Նախագծերի առաջարկների ընդունման ժամկետը: Առաջին ալիքի կայքում մեկ ամիս գործող հարթակը ստացավ 612 առաջարկ, որոնց մեջ եղել են կրթական, մշակութային, երաժշտական, սպորտային, ժամանցային, մանկական, հասարակական, քաղաքական ուղղվածության նախագծեր, ինչպես նաև նովելաշարեր, վավերագրական ֆիլմեր և սփյուռքին ուղղված ծրագրեր:

Անհատներից ստացված առաջարկները թվով գերազանցում էին ստեղծագործական թիմերի կողմից առաջարկված նախագծերին:

Օգոստոսի 10-ից հետո Հանրային հեռուստաընկերության գեղարվեստական խորհուրդը կկազմի նախընտրելի առաջարկների ցուցակ, որից հետո բոլոր մասնակիցները հայտերում նշված էլեկտրոնային հասցեներին կստանան պատասխան նամակ:

Ընտրված հայտատուների հետ հանդիպումներից և քննարկումներից հետո՝ ոլորտի այլ մասնագետների հետ միասին կիրականացվի վերջնական ընտրություն: Նախագծերի ընտրության և գեղարվեստական խորհրդի աշխատանքների մասին կտրվեն ծանուցումներ, Առաջին ալիքը կպատրաստի հատուկ ռեպորտաժ:

Հանրային հեռուստաընկերությունը շնորհակալություն է հայտնում բոլոր հեղինակներին առաջարկների համար: